



ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՅՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Ընդունվել է

Գիտական խորհրդի 29.04.2016 թվականի

թիվ 06 որոշմամբ,

Գիտական խորհրդի 26.04.2017 թվականի

թիվ 05 որոշմամբ ընդունվել է նոր խմբագրություն

Հաստատվել է

ոեկտորի 05.05.2017 թվականի

թիվ 53 - Մ հրամանով

Ռեկտոր Արմեն Մուրադյան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) մագիստրոսի կրթական ծրագիրը (այսուհետ՝ Մագիստրատուրա) բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի կրթական աստիճան է և՛ բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման ձև, որն իրականացվում է մագիստրոսական կրթական ծրագրերով:

2. Սույն կանոնակարգով սահմանվում են Մագիստրատուրայի ընդունելության պայմանները և կրթական կանոնները:

3. Մագիստրատուրայի նպատակն է՝

- խորացնել մասնագիտական գիտելիքները,
- վերամասնագիտանալ,
- կատարել ինքնուրույն գիտական ուսումնասիրություններ,
- ձեռք բերել մասնագիտական գործնական, նորարարական, տեխնոլոգիական հմտություններ, նոր հնարավորություններ ու ունակություններ,
- ստանալ մագիստրոսի որակավորման աստիճան:

4. Մագիստրատուրայի ուսուցման իրավական հիմքերն են «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, Հայաստանի Կրթության և գիտության նախարարի 2007 թվականի

ղեկտեմբերի 6-ի թիվ 1193-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը», սույն կանոնակարգը և այլ իրավական ակտեր:

5. Մագիստրատուրա կարող են ընդունվել բակալավրի, մագիստրոսի կրթական աստիճաններ կամ դիպլոմավորված մասնագետի կամ դրանց համարժեք կրթություն ունեցող անձինք:

6. Մագիստրատուրայի ուսուցումը առկա է, ուսուցման ժամկետը մինչև 2 տարի:

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

7. Մագիստրատուրայում ընդունելության ցանկն ըստ մասնագիտությունների՝ Հայաստանի Կրթության և գիտության նախարարության ներկայացմամբ, մինչև սովյալ տարվա ապրիլի 1-ը հաստատվում է Հայաստանի Կառավարության կողմից:

8. Համալսարանի Մագիստրատուրայի ընդունելության ցանկը ներառում է հետևյալ մասնագիտությունները՝

- «Ֆարմացիա»,

- «Հանրային առողջություն և առողջապահություն»:

9. ՀՀ քաղաքացիները Մագիստրատուրա կարող են ընդունվել մրցութային կարգով: Մագիստրոսի աստիճան ունեցող քաղաքացիները երկրորդ մագիստրոսական կրթություն կարող են ստանալ միայն վճարովի հիմունքներով և պետության կողմից ուսման վարձի փոխհատուցվող տեղերի համար մրցութին չեն կարող մասնակցել:

10. ՀՀ քաղաքացիները Մագիստրատուրա կարող են ընդունվել հետևյալ երկու փուլով՝

- 1-ին փուլով մագիստրատուրայի ընդունելությունն անցկացվում է պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցման (անվճար), պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ուսուցման տեղերի,

- 2-րդ փուլով մագիստրատուրայի ընդունելությունն անցկացվում է վճարովի հիմունքներով, առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի՝ ըստ ուսուցման տեղերի:

11. Օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք մագիստրատուրա կարող են ընդունվել և սովորել միջպետական և միջգերատեսչական պայմանագրերի կամ համաձայնագրերի հիման վրա, լրացուցիչ տեղերի հաշվին,

ինչպես նաև վճարովի հիմունքներով սեփական նախաձեռնությամբ:

12. Մազիստրատուրայի ընդունելության անցկացման համար ռեկտորի հրամանով և նախագահությամբ ստեղծվում է հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով), սահմանվում է անհրաժեշտ փաստաթղթերի ընդունման և մրցույթի անցկացման ժամանակացույցը: Հանձնաժողովի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը, ուսումնամեթոդական վարչության պետը և համապատասխան ֆակուլտետների դեկանները:

13. Հանձնաժողովը՝ հաշվի առնելով ֆակուլտետի դեկանի կարծիքը, ուսումնասիրում ու քննարկում է մրցույթի հավակնորդների ցուցակը և ըստ մասնագիտությունների իրականացնում մրցույթ:

14. Համալսարանի ռեկտորը Հանձնաժողովի կողմից անցկացված մրցույթի արդյունքների հիման վրա հրամանագրում է Մազիստրատուրա ընդունված դիմորդներին:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

15. Մազիստրատուրայի ընդունելության համար պահանջվող փաստաթղթերն են՝

- ա) ռեկտորին ուղղված դիմում,
- բ) դիպլոմի և դիպլոմի հավելվածի պատճենները,
- գ) անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,
- դ) հրատարակված աշխատությունների ցանկը՝ համապատասխան պատճեններով (առկայության դեպքում),
- ե) զինվորական ծառայության առնչության մասին փաստաթուղթ (զինապարտի կցագրման գրքույկ կամ զինվորական գրքույկ կամ այլ պատշաճ փաստաթուղթ),
- զ) 4 լուսանկար 3-4 չափի,
- է) համառոտ ինքնակենսագրություն (ժամանակագրական շարադրությամբ):

16. Համալսարանի Մազիստրատուրայում ՀՀ քաղաքացիների ընդունելությունն իրականացվում է հետևյալ կարգով.

ա) Համալսարանի բակալավրի կրթական ծրագրով ավարտած շրջանավարտների ընդունելությունը Մազիստրատուրա «Ֆարմացիա» և «Հանրային առողջություն և առողջապահություն» մասնագիտություններով իրականացվում է բակալավրի ամփոփիչ ատեստավորման միջառարկայական համակարգչային քննության, մասնագիտական առարկաների և ամբողջ ուսումնառության տարիների միջին

որակական գնահատականների (ՄՈԳ) գումարային միջինով:

բ) այլ բուհերի շրջանավարտների ընդունելությունը Մագիստրատուրա՝
- «Ֆարմացիա» մասնագիտությամբ իրականացվում է՝ կազմակերպելով ատեստավորման միջառարկայական համակարգչային քննություն՝ սույն կետի «ա» ենթակետով նախատեսված տվյալ տարվա ամփոփիչ ատեստավորման նույն պայմաններով և կարգով,

- «Հանրային առողջություն և առողջապահություն» մասնագիտությամբ իրականացվում է Հանրային առողջության ֆակուլտետի խորհրդի կողմից սահմանված չափորոշիչներին համաձայն անցկացվող հարցազրույցի և նախորդ ուսումնառության ծրագրում ցուցաբերած ընդհանուր առաջադիմության գումարային միջին գնահատականի կամ միջին որակական գնահատականի հիման վրա:

գ) Մագիստրատուրա չի ընդունվում այն դիմորդը՝
- ում միջառարկայական համակարգչային քննության արդյունքի ռեյտինգային ցուցանիշը դուրս է Մագիստրատուրայի համար նախատեսված տեղերի շրջանակից,
- ով սույն կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված միջառարկայական համակարգչային քննության արդյունքով անբավարար գնահատական է ստացել,
- ով սույն կետի «բ» ենթակետի համաձայն չի անցել հարցազրույցը և/կամ ըստ նախորդ ուսումնառության ծրագրի՝ ունի ցածր առաջադիմություն:

դ) միջառարկայական համակարգչային քննության արդյունքով առնվազն բավարար գնահատական ստացած դիմորդները կարող են ընդունվել վճարովի համակարգի Մագիստրատուրա կամ մասնակցել ըստ մասնագիտությունների անցկացվող ՀՀ Կառավարության կողմից հաստատված ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) ուսուցման տեղերի մրցույթին:

17. «Ֆարմացիա» և «Հանրային առողջություն և առողջապահություն» մասնագիտություններով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) ուսուցման տեղերի մրցույթի ընթացքում դիմորդի՝ միջառարկայական համակարգչային քննությունից հավասար միավորներ հավաքելու դեպքում Մագիստրատուրայի ընդունելության ժամանակ առաջնահերթությունը տրվում է.

ա) ատեստավորման միջառարկայական համակարգչային քննության արդյունքին,

բ) նախորդ ուսումնառության ծրագրում ցուցաբերած ընդհանուր առաջադիմությանը՝ գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատ-

տականով,

զ) մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականին կամ միջին որակական գնահատականին,

ը) ոչ մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմությանը՝ գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով,

ե) տպագրված կամ տպագրման ընդունված գիտական աշխատությունների, թեզիսների, զեկուցումների քանակին:

18. Մագիստրատուրայի ուսանողի հետ կնքվում է կրթության մասին պայմանագիր:

19. Վճարովի հիմունքներով սովորող ուսանողի տարեկան ուսման վարձը սահմանվում է Համալսարանի կողմից, որը ենթակա չէ փոփոխման ուսումնառության բոլոր տարիների ընթացքում:

20. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ուսման վարձի վճարման ժամկետները սահմանվում է ուսանողի հետ կնքված կրթության մասին պայմանագրով:

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

21. Մագիստրատուրայի ուսանողներն իրավունք ունեն օգտվելու Համալսարանի ուսումնական և կլինիկական բազաներից, գիտական և այլ սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գրադարաններից, ինչպես նաև հանրակացարաններից:

22. Ուսումնական գործընթացը Մագիստրատուրայում իրականացվում է ռեկտորի կողմից հաստատված ուսումնական պլաններով և կրեդիտային համակարգով:

23. Ըստ մագիստրոսի որակավորման ուսումնական պլանների՝ ուսման ժամաքանակի 75 տոկոսը հատկացվում է հիմնական մասնագիտություններին (90 կրեդիտ), իսկ 25 տոկոսը (30 կրեդիտ)՝ հարակից առարկաների ուսումնասիրությանը՝ ընդամենը 120 կրեդիտ:

24. Համապատասխան հրավերի առկայության դեպքում Համալսարանի ռեկտորի համաձայնությամբ Մագիստրատուրայի ուսանողն իրավունք ունի օտարերկրյա համապատասխան բուհերում՝ առանց ընդհատման (վեց ամսից ոչ ավել) կրեդիտներ հավաքել մասնագիտական, հարակից և էլեկտիվ առարկաներից: Ուսման ավարտից հետո օտարերկրյա բուհից ուսանողը պետք է ներկայացնի տեղեկանք՝ ուսումնառության մասին, ինչպես նաև ուսումնական պլան-ծրագիրը: Համալսարանի և

այլ բուհերի միջև համաձայնագրերի ու համատեղ ծրագրերի շրջանակներում ուսանողի ուսումնառությունը կարող է շարունակվել նաև այլ պայմաններով և կարգով:

25. Մագիստրատուրայում ուսումնառության, ստուգարքների և քննությունների անցկացման իրավական հիմքը Համալսարանի «Ուսանողների գնահատման համակարգում ստուգարքների և քննությունների անցկացման և հանձնման կարգն» է:

26. Յուրաքանչյուր ուսանող պետք է ունենա ստուգման գրքույկ, որտեղ արտացոլվում են նրա ուսումնական գործունեությունը և առաջադիմությունը:

27. Համալսարանի մագիստրատուրայում դասավանդող յուրաքանչյուր ամբիոն պետք է ունենա Մագիստրատուրայի ծրագրի պատասխանատու, որն ամբիոնի վարիչի հետ միասին պատասխանատու է Մագիստրատուրայի ուսումնական ծրագրի ընդհանուր ուսումնական գործընթացի ապահովման համար:

28. Մագիստրոսի որակավորման ամփոփիչ ատեստավորումն անցկացվում է Համալսարանի «Ամփոփիչ ատեստավորման կանոնակարգին» համապատասխան:

29. Մագիստրոսի որակավորում չստացած ուսանողն իր ցանկությամբ կարող է հաջորդ ուսումնական տարվա ապրիլ ամսից քննությանը նախապատրաստվելու նպատակով հաճախել վճարովի հիմունքներով կազմակերպվող երկամսյա դասընթացներին և հանձնել ամփոփիչ ատեստավորումը:

30. Մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորումն անցած ուսանողներին, ըստ ֆակուլտետների՝ Համալսարանի կողմից տրվում է հետևյալ որակավորումները.

- Դեղագիտական ֆակուլտետի շրջանավարտին՝ «Ֆարմացիա» մասնագիտությամբ՝ «Ֆարմացիայի մագիստրոս» որակավորումը,

- Հանրային առողջության ֆակուլտետի շրջանավարտին՝ «Հանրային առողջություն և առողջապահություն» մասնագիտությամբ՝ «Հանրային առողջապահության մագիստրոս» որակավորումը:

— — —